# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## «Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի Պիոներների փողոց թիվ 1 հասցեում միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և փաթեթի վերաբերյալ 2-րդ հանրային լսման

**05.05.2026թ.**
**Գագարին բնակավայր**

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն), Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի իրականացված ծանուցման համաձայն՝ 2026 թվականի մայիսի 5-ին՝ ժամը 12:00-ին Գագարին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, իրականացվեց Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի Պիոներների փողոց թիվ 1 հասցեում միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և գործունեության փորձաքննական գործընթացի վերաբերյալ երկրորդ հանրային լսում:

Գագարին բնակավայրում հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակիցներ Դավիթ Քանգեզուրյանը, Հակոբ Հարությունյանը, Սևան համայնքապետարանի աշխատակից Սամվել Թադևոսյանը, Գագարին բնակավայրի վարչական ղեկավար Կամո Սարգսյանը, դպրոցի տնօրեն Անդրանիկ Ստեփանյանը, «Արմստրոյ» ՍՊԸ-ի տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանը, «Քոնսէկոարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արման Խաչատրյանը, ազդակիր համայնքի և բնակավայրի բնակիչները և այլ մասնակիցներ (մասնակիցների ցանկը կցվում է):

Ողջույնի խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ հանրային լսման պատասխանատու Ա. Վարդանյանը (այսուհետ՝ Մասնագետ), նշեց, որ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված պահանջներով: Նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և համարվում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ: Այնուհետև ներկայացրեց փորձաքննական գործընթացի ընթացակարգը, օրենսդրական կարգավորումները, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման կարգն ու ժամկետները:

Այնուհետև խոսքը փոխանցեց «Քոնսեկոարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արման Խաչատրյանին, ով անդրադարձավ գնահատման հաշվետվության և նախագծային փաստաթղթի կազմմանն ու լրամշակմանը, առաջարկեց՝ քննարկումը շարունակել առկա հարցերի, առաջարկությունների և դիտողություններ շուրջ, քանի որ ներկաները տեղեկացված են նախատեսվող գործունեությունից և նախագծից:

Գագարին բնակավայրի բնակիչը ներկայացավ և նշեց, որ հանդես է գալիս գյուղի բնակիչների անունից: Ներկայացնելով գյուղի բնակիչների դիրքորոշումը, նշեց, որ թեև բնակիչների մեծ մասը ներկա չեն՝ աշխատանքային օրվա պատճառով, սակայն համայնքում առկա է միասնական մոտեցում: Նա ընդգծեց, որ բնակիչների պահանջն է՝ չքանդել գործող դպրոցի շենքը և այն պահպանել որպես մշակութային կամ այլ հանրային նշանակության հաստատություն: Առաջարկվեց նույն տարածքում կառուցել նոր դպրոց՝ պահպանելով գործող շենքը:

Գագարին բնակավայրի բնակիչը ներկայացավ և հանդես եկավ գյուղի բնակիչների անունից՝ ներկայացնելով համայնքի դիրքորոշումը: Նա նշեց, որ թեև բնակիչների մեծ մասը ներկա չեն՝ աշխատանքային օրվա պատճառով, սակայն բնակավայրում առկա է միասնական մոտեցում: Բնակիչների խնդրանք պահանջն է՝ չքանդել գործող դպրոցի շենքը և այն պահպանել որպես մշակութային կամ այլ հանրային նշանակության հաստատություն: Միաժամանակ առաջարկվեց՝ նոր դպրոցի կառուցումն իրականացնել՝ պահպանելով գործող շենքը՝ կատարելով 20-30 տոկոս նախագծային փոփոխություններ:

Բնակիչը նաև նշեց, որ առաջին հանրային լսման ընթացքում առաջարկվել է դպրոցի հարակից տարածքում առկա ազատ հողամասի տրամադրումը նոր դպրոցի կառուցման համար: Հարցը քննարկվել է վարչական շրջանի ղեկավարի նստավայրում բնակչների մասնակցությամբ, այնուհետև համայնքի ավագանու նիստի ժամանակ: Անհրաժեշտ է հողի նպատակային նշանակության փոփոխություն կատարել:

Գագարին բնակավայրի բնակիչները և վարչական ղեկավարը նշեցին, որ առաջին հանրային լսման ընթացքում առաջարկվել է դպրոցի հարակից տարածքում գտնվող ազատ հողամասը նույնպես տրամադրել նոր դպրոցի կառուցման նպատակով՝ նախագծային առաջադրանքը իրականացնելու համար: Հարցը քննարկվել է վարչական շրջանի ղեկավարի նստավայրում՝ բնակիչների մասնակցությամբ, ապա՝ համայնքի ավագանու նիստում: Անհրաժեշտ է միայն իրականացնել հողի նպատակային նշանակության փոփոխություն:

«Արմստրոյ» ՍՊԸ-ի տնօրենը նշեց, որ նախագիծը մշակվել է պատվիրատուի կողմից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա և կազմակերպությունն ունի պայմանագրային և ժամկետային

պարտավորություններ, և նախագծային էական փոփոխությունները կարող են լրացուցիչ ժամանակ և աշխատանք պահանջել:

Մարզպետարանի աշխատակից Հակոբ Հարությունյանը դիմեց բնակիչներին՝ խնդրելով ներկայացնել հիմնավոր պատճառներ, թե ինչու չպետք է քանդել գործող շենքը: Ի պատասխան՝ բնակիչները նշեցին, որ, իրենց գնահատմամբ, շենքը դեռևս կարող է ծառայել համայնքին և օգտագործվել հանրային նպատակներով, ինչը կարևոր նշանակություն ունի գյուղի համար:

Մարզպետարանի աշխատակիցը հարց ուղղեց ճարտարապետին, թե ինչու հնարավոր չէ փոփոխել նախագիծը: Ի պատասխան՝ ճարտարապետը նշեց, որ նախագիծը մշակվել է հաստատված առաջադրանքի հիման վրա, և դրա փոփոխությունը կպահանջի լրացուցիչ ամիսների աշխատանք: Նա նաև հավելեց, որ շենքը, ըստ իրականացված մասնագիտական գնահատականի, սեյսմակայուն չէ և ենթակա չէ հետագա շահագործման:

Այնուհետև քննարկում ծավալվեց շենքի սեյսմակայունության և իրականացված հետազոտությունների արդյունքում տրված եզրակացության վերաբերյալ: Միաժամանակ բնակիչները հայտնեցին, որ համաձայն չեն նախաձեռնողի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների հետ: Մասնագետը խնդրեց համապատասխան եզրակացությունը տրամադրել նաև փորձաքննական կենտրոնին:

Մարզպետարանի կողմից առաջարկվեց բնակիչների կողմից նշված հողամասում կառուցել նոր հաստատություն: Սակայն բնակիչները վերահաստատեցին, որ իրենք դեմ չեն նոր դպրոցի կառուցմանը, այլ դեմ են գործող շենքի քանդմանը:

Մարզպետարանի ներկայացուցիչը վստահեցրեց, որ հարցը կքննարկվի համապատասխան կառույցների և ղեկավարության հետ, և բոլոր հիմնավորված առաջարկները կդիտարկվեն որպես հնարավոր լուծումներ:

Բնակիչներին առաջարկվեց դիմել նաև Քաղաքաշինության կոմիտե և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ խնդրի, նպատակների և հնարավոր լուծումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար:

Նախատեսվող գործունեության հետագա քննարկումները վերաբերում էին դպրոցի կառուցման համար դիտարկվող և կադաստրային վկայականով սահմանված տվյալների միջև առկա անհամապատասխանություններին, կադաստրի վկայականի բացակայությանը, նոր ենթակայանի անվտանգային գոտու պահպանմանը և կաթսայատան կառուցմանը, ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման և գազամատակարարման տեխնիկական պայմանների բացակայությանը, տարածքի ոչ լիարժեք նկարագրմանը, առկա և հատման ենթակա ծառերի հստակեցմանը և այլն, ինչպես նաև շին. աշխատանքների ընթացքում

հնարավոր ազդեցություններին և ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներին այլն:

Նախաձեռնող կողմը նշեց, որ հանրային լսման ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ հիմնավորումները և համապատասխան փաստաթղթերը կներկայացվեն ամփոփաթերթին կից:

Մասնագետը նշեց, որ հանրային լսումների ընթացքում, շահագրգիռ հանրության իրավունքն է շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ապահովման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին) և նախաձեռնողին ներկայացնելու ցանկացած գրավոր և բանավոր առաջարկություն, դիտողություն և կարծիք՝ առանց դրանց հիմքում ընկած պատճառների հիմնավորման՝ ինչն էլ հանրային լսման նպատակն է: Նախաձեռնողը և լիազոր մարմինը հաշվի են առնելու լսման ընթացքում ներկայացված կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները:

Մասնագետը նշեց նաև, որ նախաձեռնողը գործունեությունն իրականացնելիս հետևելու է Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսվելու են հավելյալ միջոցառումներ: Հավելեց նաև, որ համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն: Նախաձեռնողը կտեղեկացվի այլ կարծիքներ ստանալու դեպքում:

Ներկաները հանրային լսումը համարեցին ավարտված՝ արձանագրելով, որ բնակիչները դեմ են գործող դպրոցի շենքի քանդմանը, և նշվեց, որ հետագայում կկազմակերպվեն համապատասխան քննարկումներ՝ ընդունելի լուծումներ գտնելու նպատակով:

Հանրային լսումները նկարահանվել և ձայնագրվել են:

Հանրային լսումների մասնակիցների ցանկը կցված է արձանագրությանը:

Լսումների վարող, պատասխանատու
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան

«Արմստրոյ» ՍՊԸ

"АРМСТРОЙ"
"ARMSTROY"
09809552